



ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ» ՀՀՄՍ 1-ՈՒՄ. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԿԱՄ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

2020 թ. հունվարի 20-ին ՀՀՄՍ-ն հրապարակեց փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ում, որով հստակեցվել են անորոշ մարման (կատարման) ժամկետ ունեցող պարտավորությունների ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման հետ կապված հարցեր: Այս փոփոխություններով միայն հստակեցվում են գոյություն ունեցող մոտեցումները, այլ ոչ թե փոփոխվում դրանք կամ նորերը սահմանվում: Ստորև ներկայացնում ենք հիմնական հստակեցումները:

✚ Պարտավորությունը որպես ընթացիկ դասակարգելու համար անհրաժեշտ (և բավարար) պայմաններից մեկն ըստ նախկին շարադրանքի (պարագրաֆ 69(դ)) այն էր, որ կազմակերպությունը չունենա **ոչ պայմանական¹ իրավունք**¹ հետաձգելու պարտավորության մարումը (կատարումը) հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս (տես՝ պարագրաֆ 73): Ըստ նոր շարադրանքի՝ հստակեցվում է, որ մարումը առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջին: Միաժամանակ, ջնջվում է «ոչ պայմանական» («անվերապահ») արտահայտությունը, քանի որ ավելացված նոր 72Ա պարագրաֆով նաև հստակեցվում է, որ այդ իրավունքը պետք է «բովանդակային» լինի: Այլ կերպ ասած՝ եթե այդ իրավունքը պայմանական է, այսինքն՝ պայմանավորված է կազմակերպության կողմից որոշակի սահմանված պայմանները բավարարելով, ապա այդ իրավունքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին գոյություն ունի, եթե հաշվետու

ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ սահմանված պայմանները բավարարված են:

✚ Ավելացված նոր 75Ա պարագրաֆով հստակեցվում է, որ պարտավորությունը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու համար կարևորը մարումը (կատարումը) առնվազն տասներկու ամսով հետաձգելու իրավունքի **առկայությունն** է հաշվետու ժամանակաշրջանի **վերջի դրությամբ** (օրինակ՝ դեկտեմբերի 31-ին), իսկ մտադրությունները կամ ակնկալիքները, կամ այդ իրավունքից փաստացի օգտվելու հավանականությունը որևէ նշանակություն չունեն: Այսինքն՝ եթե այդպիսի հետաձգման իրավունքն առկա է, սակայն կազմակերպությունը մտադիր է չօգտվելով այդ իրավունքից մարել (կատարել) պարտավորությունը հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող թեկուզ առաջին օրը կամ նույնիսկ փաստացի մարում (կատարում) է հաջորդ օրը, ապա, միևնույն է, դա պետք է դասակարգվի որպես ոչ ընթացիկ: Այնուամենայնիվ, նման հանգամանքերում մարման (կատարման) ակնկալվող ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է անհրաժեշտ լինի բացահայտելու, որպեսզի ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները կարողանան գնահատել դրա ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի վրա: Եթե որպես ոչ ընթացիկ դասակարգված այդպիսի պարտավորությունը մարվում (կատարվում) է հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար հաստատման ամսաթիվը, ապա այդ դեպքը բացահայտվում է որպես չճշգրտող դեպք՝ «Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր»

¹ ՀՀՄՍ 1-ի պաշտոնապես հայերեն թարգմանված տարբերակում օգտագործված է «անվերապահ

իրավունք» արտահայտությունը (անգլերեն՝ unconditional right):

ՀՀՄՍ 10-ին համապատասխան: Նույն կերպ, որպես չճշգրտող դեպք է բացահայտվում այն դեպքը, երբ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (օրինակ՝ դեկտեմբերի 31-ին) որպես ընթացիկ դասակարգված պարտավորության գծով կազմակերպությունը մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար հաստատման ամսաթիվը (օրինակ՝ թեկուզ հունվարի 1-ին) ստանում է իրավունք հետաձգելու պարտավորության մարումը (կատարումը) առնվազն 12 ամսով:

- ✚ Ավելացված նոր 76Ա պարագրաֆով հստակեցվում է, որ պարտավորությունը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու նպատակով մարումը (կատարումը) նշանակում է պարտավորության դադարում՝ կոնտրագենտին (պարտատիրոջը) փոխանցում կատարելու միջոցով: Ընդ որում, դա կարող է լինել՝
 - ա) դրամական միջոցների կամ այլ տնտեսական ռեսուրսների **փոխանցում** կամ
 - բ) կազմակերպության սեփական բաժնային գործիքների **փոխանցում** (բացառությամբ նոր 76Բ պարագրաֆով նախատեսված դեպքի):
- ✚ Ավելացված նոր 76Բ պարագրաֆով հստակեցվում է, որ պարտավորության պայման-

ները, ըստ որոնց, կոնտրագենտի ընտրությամբ (ընտրանքով), մարումը կարող է իրականացվել սեփական բաժնային գործիքների **փոխանցմամբ**, չեն ազդում դրա որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա, եթե «*Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը*» ՀՀՄՍ 32-ի կիրառմամբ կազմակերպությունը ընտրանքը (օպցիոնը) դասակարգում է որպես բաժնային գործիք՝ այն ճանաչելով պարտավորությունից առանձին որպես բաղադրյալ ֆինանսական գործիքի սեփական կապիտալի բաղադրիչ:

- ✚ Այս հստակեցումները նախաձեռնելու դրդապատճառներից մեկը 69(դ) պարագրաֆի (որում խոսվում էր ոչ պայմանական կամ «անվերապահ» իրավունքի մասին) և պարագրաֆ 73-ի (որում խոսվում էր ակնկալիքի և հայեցողության կամ իրավասության մասին) միջև առերևույթ հակասության վերացումն էր:
- ✚ Ստանդարտի այս փոփոխությունները պարտադիր կիրառելի են դառնում 2022 թ. Հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար՝ հետընթաց կիրառմամբ: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է՝ համապատասխան բացահայտմամբ:

Եթե այս նորության հետ կապված Ձեզ մոտ առաջացել են հարցեր, ապա կարող եք կապվել «Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ տնօրեն Արթուր Հարությունյանի հետ (էլ. հասցե՝ artur.harutyunyan@anaudit.am)